ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/38 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մարզագույքի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 19.03.2024թ. ժամը 11:30-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գիլոյան
Հանձնաժողովի անդամ՝ Դավիթ Բաղումյան
Սուսաննա Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արմինե Սահակյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.
1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
2	«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ
3	ԱՁ Կիմա Խաչատրյան
4	«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ
5	«Քլին Զոն» ՍՊԸ
6	«ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ
7	«ՍԻ Էյ Գրուպ» ՍՊԸ
8	«ՄՇՈ ԱՍՏՂԵՐ» ՍՊԸ
9	«Մուշ կոմպլեքս» ՍՊԸ

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի մասով կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:
3"2 «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 2-րդ չափաբաժնի մասով կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:
3.3 Կիմա Խաչատրյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը 3-րդ չափաբաժնի մասով կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:
3.4 «Քլին Զոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 ԷԱՃ-ի ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները ներկայացվում է կից Հավելված 1-ում.

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին**

5.1 Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 313 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 26.03.2024 թ. ժամը 11:00-ին

6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

6.1 «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1.3՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը պետք է լինի 2024 թվականին գրանցված:
- Ձեր կողմից առաջարկված ապրանքի մոդելը և ապրանքային նշանը չի համապատասխանում հրավերով ապրանքին ներկայացվող պահանջներին (middle weight, competition):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.3 Կիմա Խաչատրյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, մասնավորապես՝

- Բացակայում է Կիմա Խաչատրյան ԱՁ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու լիազորությունը այլ անձի վերապահված լինելու մասին փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.4 «Քլին Զոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1.3՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը պետք է լինի 2024 թվականին գրանցված:
- Հավելված 1.3-ի մեջ բացակայում է մրցույթի ծածկագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ-ին, Կիմա Խաչատրյան ԱՁ-ին և «Քլին Զոն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2-ից 6.4 կետերում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը շարունակել մասնակիցների կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ 2024 թ մարտի 28-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 28.03.2024 թ. ժամը 11:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է 6.2 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

8.2 Կիմա Խաչատրյան ԱՁ -ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է 6.3 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

8.2 «Քլին Զոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է 6.4 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին,

2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ-ին,

3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել Կիմա Խաչատրյան ԱՁ -ին,

7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Քլին Զոն» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

9.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել՝

- «ՍԻ էյ Գրուպ» ՍՊԸ-ի, «ՄՇՈ ԱՍՏՂԵՐ» ՍՊԸ-ի, Կիմա Խաչատրյան ԱՁ-ի, «Քլին Զոն» ՍՊԸ-ի և «Մուշ կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտերը 2-րդ չափաբաժնի մասով,
- «Քլին Զոն» ՍՊԸ-ի-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

9.3 «ՎԻ ԷՍ ՏԻ ԱՔԱՅ» ՍՊԸ-ի հայտը՝ 1-10-րդ, Կիմա Խաչատրյան ԱՁ -ի հայտը՝ 1-ին, 4-10-րդ, «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի հայտը՝ 1-6-րդ, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մերժվել են համակագի կողմից՝ գնային առաջարկները նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10.Գնահատման արդյունքների մասին

10.1 Հրապարակել **1-3-րդ և 7-10**-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

10.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման գործընթացը 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կարեն Գիլոյան

---------- Դավիթ Բաղումյան

---------- Սուսաննա Ղազարյան

---------- Արմինե Սահակյան /քարտուղար/